ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ԵԱՏԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ (ԲՄ)
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

19.07.2019թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ (N 593/ԴՎԱ Հրաման առ 30.07.2019թ.))՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱՎ պետի ՊԺԿ, գնդապետ Տ. Մաթևոսյան,
Գնահատողներ՝
ՀՀ ՋՈՒ ԻԶՎ Ս բաժնի պետ, գնդապետ Յու. Եսայան.
ՀՀ ՋՈՒ ԻԶՎ Ս բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մուրադյան,
Բացակայում է՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության գլխավոր մասնագետ Տ. Գասպարյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀՇ 2-րդ դասի առաջատար ծառայող Գ. Գևորգյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Գևորգյան)

1. Մասնակիցների՝ ԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության և դրանց ԲՄ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության, դրանց ԲՄ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Գ. Գևորգյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին մասնակցի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերն առկա են, սակայն դրանց և ԲՄ ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ մասնակցի կողմից ներկայացված հրավերով նախատեսված «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող նմանատիպ պայմանագրերի ընդհանուր գումարը պակաս է ընթացակարգի շրջանակում առավելագույն գումարի 50 տոկոսից, ինչպես նաև կողմից ներկայացված հրավերով նախատեսված «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող նմանատիպ պայմանագրերի հաշիվ ապրանքագրերը և սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերը (հանձման-ընդունման արձանագրություն) ներկայացված են թերի: Հաշվի առնելով, որ ներկայացված պայմանագրերը կնքված են առավելագույն գումարով, և հնարավոր է այդ պայմանագրերի ոչ ամբողջ գումարի չափով կատարումը, ուստի նշվել է, որ անհրաժեշտ է ներկայացնել կամ բացակայող հաշիվ ապրանքագրերի և սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի (հանձման-ընդունման արձանագրություն) պատճենները, կամ տվյալ պայմանագրերի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման ընօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ 19.07.2019թ. գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և ծանուցել մասնակցին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: Մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, և 23.07.2019թ. նիստը շարունակվել է:

Քանի որ 18.07.2019թ. ստացված ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց պարտավորություններ չունի, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջներն առկա են, հանձնաժողովը որոշեց մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող:

1.2 01.08.2019թ., հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, հանձնաժողովը որոշեց մասնակցի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով ԲՄ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ. Գևորգյան)

Հանձնաժողովը որոշեց հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով ԲՄ ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Տ. Մաթևոսյան

Գնահատող Յու. Եսայան

Գնահատող Ա. Մուրադյան

Գնումները համակարգող Գ. Գևորգյան